ՀԱՅ ԿՆՈՋ ՁԱՅՆԸ *)

II

Շատերը աշխատում են հաստատել, թէ կնոջ ոչ—անկախ տնտեսական դրութիւնը մեծ օգուտ է բերում մայրութեանը, որովհետև այդ դրութեան մէջ կինը աւելի մասնագիտօրէն է վերաբերւում դէպի իր կոչումը։ Բայց դա սխալ կարծիք է, մայրութիւնը դրանից ոչ մի օգուտ չէ ստանում։ Նոյն իսկ չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, թէ այդպիսի դրութիւնը ընդհակառակը վնասում է մայրութեանը, որովհետև մեծ մասամբ դրա հետևանքներն են վաղաժամ ծնունդները և երեխաների մահուան թւի աստիճանաբար մեծանալը։

Կար ժամանակ, երբ կինը գնահատւում էր իր երեխաների քանակով. քանի շատ երեխաներ ունենար կինը, այնքան բարձր էին գնահատում նրան։ Բայց երբ զարգացաւ արդիւնագործութիւնը, և դժուարացան կեանքի պայմանները, հայրը այլևս չէր ուրախանում իր երեխաների թւով։ Այդ պատճառով աղքատ դասակարգի մէջ առաջ է եկել սակաւաթիւ երեխաներ ունենալու հակում։ Բայց հարուստ կանայք էլ յետ չեն մնում այդ հակումից։

Չ'ունենալով ոչ մի աշխատանք, շատ անգամ նոյն իսկ տնային ոչ մի զբաղմունք, հարուստ կանայք ձգտում են գոնէ արտաքին գեղեցկութեամբ փայլել։ Իսկ ճշմարիտ մայր լինել և միևնոյն ժամանակ արտաքին փայլը, գեղեցկութիւնը չը կորցնել, դա գրեթէ անկարելի բան է։ Հենց դրա համար էլ նրանք շատ անգամ աշխատում են ամուսնութեան բնական հետևանքից—մայր լինելուց խոյս տալ։ Սակայն այդ միևնոյն շար-

*) Տես Մուրճ № 1։

ժառիթները չեն, որ ստիպում են աղքատ դասակարգի կանանց էլ խոյս տալ երեխայ բերելուց։ Ո՛չ, այստեղ մեծ դեր է խաղում չքաւորութիւնը—հացի խնդիրը։

Ի հարկէ՝ թէ հարուստ և թէ չքաւոր ընտանիքներում այդ բանը տեղի չէր ունենայ, եթէ մայրերը կանգնած լինէին իրանց կոչման բարձրութեան վրայ, եթէ ունենային ցանկալի կրթութիւնը, եթէ հասկանային մայրութեան վեհութիւնն ու մեծ պատասխանատուութիւնը։

Ո՞րքան բարիքներ կարող են հասցնել մարդկութեանը կրթուած մայրերը...

Ինչպէս բոլորին յայտնի է, երեխաներն աւելի մօտ են լինում իրանց մօրը, քան հօրը։ Շատ երեւելի մարդիկ մինչև իրանց կեանքի վերջը մեծ պատկառանքով ու սիրով են յիշել իրանց մօր անունը։

Պատերազմի դաշտում մեռնող զինուորը յիշում է իր մօրը, ցանկանում է նրան տեսնել։ Անառակ որդին իր մօր մօտ է վերադառնում, նրա զգուանքին է ապաւինում։ Մայրը իր զաւակների համար մի տեսակ փարոս է թշուառութեան և տրխրութեան ծովում։ Նա է երեխաներին սկզբնական կրթութիւն տուողը։ Ինչ որ գիտէ, ինչ որ զգում է—այդ բոլորը նա տալիս է իր զաւակներին, ուստի չը պիտի զարմանալ, որ մեր ամենաքնքոյշ ու ամենախոր զգացմունքները «մայր» խօսքի շուրջը են պտտւում։

Հին ժամանակներում երեխաների ամբողջ դաստիարակութիւնը ընկնում էր ծնողների, մանաւորապէս մօր վրայ։ Իսկ այժմ այդպէս չէ. երեխաների դաստիարակութիւնը սկզբում մօր ձեռքին է, իսկ յետոյ անցնում է դպրոցներին, հասարակութեանը։

Հին ժամանակներում մայրութիւնը կատարւում էր որպէս մի բնազդ, որպէս սեռական յարաբերութեան մի բնական հետեւանք. իսկ ներկայումս դրա վրայ աւելացել է նաև գիտակցութիւնը, զարգացած խելքը։

Կենդանական ոչ մի տեսակի ժառանգները այնքան հոգատարութիւն և երկարատև դաստիարակութիւն չեն պահանջում, որքան մարդկային ժառանգները։ Ո՞վ պէտք է լինի այդ հոգսը քաշողը, այդ պահանջը լրացնողը. ի հարկէ՝ մայրը։ Ո՞րքան մեծ է նրա դերը։ Համեմատենք մօրից զրկուած երեխային մայր ունեցողի հետ։ Համեմատենք երկու երեխաների, որոնցից մէկը միայն մօր հոգատարութեան տակ է, իսկ միւսը—ծառաների ու դաստիարակների և այն ժամանակ կը հասկանանք այն մեծ ոյժը, այն մեծ ազդեցութիւնը, որի անունն է «մայրու-

թիւն»։ Լաւ մայրերը կարող են աշխարհ շինել, իսկ վատերը՝ քանդել։

Արժանի՞ են արդեօք համակրութեան այն մայրերը, որոնք իրանց հանդստութեան ու զուարճութիւնների պատճառով ուրիշի խնամքին են յանձնում հարազատ զաւակներին կամ թողնում են թափառել փողոցներում, հրապարակներում առանց խնամքի ու հսկողութեան։ Երբ մենք պատահում ենք մի շատ առողջ և բարոյապէս մաքուր օրիորդի կամ երիտասարդի, այդ բանը իսկոյն և եթ վերագրում ենք հոգատար մօր ջանքերին ու դաստիարակութեանը։ Իսկ ո՞վ է մեծացնում այն հազարաւոր ստոր, կեղտոտ, փչացած էակներին, որոնք կատարեալ չարիք են դառնում հասարակութեան համար։

Երբ մենք խօսում ենք յայտնի մարդկանց մասին, իսկոյն յիշում ենք նրանց մայրերին։ Իսկ ո՞վ է ծնում ու սնուցանում բազմաթիւ ոճրագործներին, գողերին, աւազակներին։ Ի հարկէ մայրերը, դարձեալ մայրերը։

Ինչպէս էլ քննելու լինենք հարցը, կը տեսնենք, որ մայրական կոչումը շատ մեծ դեր է խաղում հասարակական կեանքում։

Բնութիւնը կին արարածին տուել է մի մեծ արտօնութիւն՝ մարդկութեան համար նոր անդամներ ծնելու և մեծացնելու արտօնութիւնը։ Իսկ հասարակութիւնը այդ բանը գիտենալով հանդերձ՝ նրա գործունէութեան առաջ պատնէշներ է բարձրացրել, նրան զրկել է ազատութիւնից, անկախ դրութիւնից, նրան թոյլ չէ տալիս բարձր գիտութեան հետևելու, իր ոյժերը կատարելագործելու։ Ո՜րքան վնասակար է այդպիսի վերաբերմունքը, օրքան ամօթալի։

Մեր մայրերը տգէտ են, չեն հասկանում իրանց կոչման բարձրութիւնը. իսկ ո՞վ է մեղաւոր, ո՞վ է նրան այդ դրութեան մէջ դնողը։ Ի հարկէ՝ այն հասարակութիւնը, որն իր աւանդական սովորութեամբ ստիպում է կնոջը դուրս չը գալ ընտանեկան շրջանից, միշտ տղամարդու հպատակն ու ստրուկը մնալ և չը հետևել գիտութեան ու հասարակական կեանքի հոսանքին։

Կինն իր բազմակողմանի գործունէութեամբ պիտի մասնակցէ սոցիալական կեանքին, որպէս զի հասկանայ նրա լաւ ու վատ կողմերը, նրա ընթացիկ պահանջները և այդ բոլորի համեմատ սերունդ պատրաստէ, երեխաներ կրթէ ու մեծացնէ։

Այո՛, իւրաքանչիւր կին դեռ մինչև մայր դառնալը պիտի լաւ ճանաչէ կեանքը և հասկանայ իր բարձր կոչումը։ Իսկ մեզանում բոլորովին հակառակն է տեղի ունենում։ Մեր օրիորդները կրթւում են այնպիսի պայմաններում, այնպիսի ուղղութեամբ, որ բոլորովին առնչութիւն չ՚ունի մայրական պարտա-

կանութիւնների հետ։ Նրանք պատրաստւում են, դաստիարակւում են միայն նրա համար, որ դրաւեն հակառակ սեռին, բաւարարութիւն տան նրանց պահանջներին։ Արտաքին գեղեցկութիւնը, զարդն ու զարդարանքը նրանց աւելի է զբաղեցնում, քան ներքին գեղեցկութիւնը, քան հոգու և սրտի դաստիարակութիւնը։

Նրանք շատ բան են կարդում, շատ բան են սովորում, իսկ մայրութեան մասին—ոչինչ։ Մայրական պարտականութիւնների հետ նրանք ծանօթանում են միայն այն ժամանակ, երբ մայր են դառնում, այսինքն երբ երեխայ են ծնում։ Այս դրութիւնը կարելի է համեմատել այն տղամարդկանց դրութեան հետ, որոնք իրանց ձեռքն են առել ամբողջ ազգի պաշտպանութիւնը, բայց ոչ մի զէնք չունեն դրա համար։ Ի՞նչ կը լինէր այդ ազգի վիճակը, եթէ նրա զինուորները մինչև պատերազմի դաշտ գուրս գալը ոչ մի գաղափար չունենային պատերազմի կամ զինուորական ծառայութեան մասին։

Կանանց կրթութեան ծրագրի մէջ չէ մտնում «մայրութեան» առարկան։ Մինչև իսկ ամօթ է համարւում աղջկան ծանօթացնել մայրական ապագայ սուրբ պարտականութիւնների հետ։ Լռութեամբ թոյլատրւում է, որ այդ բանը կատարուի այսպէս կոչուած՝ «մայրական սուրբ բնազդով»։ Իսկ կեղծ քաղաքավարութիւն, արտաքին փայլ, հաճոյախօսութիւն ու կոկետութիւն—դրանք թոյլատրելի են։ Չէ՞ որ այդ միջոցներով կինը կարող է գրաւել տղամարկանց, ուրեմն էլ ինչու՞ ուրիշ բաների մասին մտածել։ Այսպիսով հասարակութիւնը ստիպում է, որ կինը միայն իւր բնազդի միջոցով հասկանայ մայրական սուրբ պարտականութիւնները։ Մայրական բնազդը շատ բարձր և սուրբ զգացմունք է, բայց միայն այն չափով, ինչ չափով բնութեան ամեն մի օրէնք։ Զարգացման ստոր աստիճանի վրայ կանգնած վայրենիների և կենդանիների համար բնազդը շատ մեծ դեր է խաղում, իսկ քաղաքակիրթ հասարակութեան համար մի՞թէ ամօթ չէ, որ ստիպում է կնոջը կանգնել այդ միևնոյն աստիճանի վրայ և միմիայն բնազդի թելադրութեամբ կատարել իր պարտականութիւնները։

Կինը մինչև այժմ զրկուած է եղել ազատութիւնից ու լայն գործունէութիւնից, որը զարգացնում է մարդուս միտքը, ուժեղացնում է կամքը և կատարելագործում է ընդունակութիւնները։ Նա շատ յետ է մնացել տղամարդուց։ Ահա այդպիսով ծնող մարդկութիւնը մեծանում և կրթւում է տգէտ ու անփորձ մայրերի ձեռքով։

Բայց ամեն մի մայր՝ լինի նա տգէտ կամ գիտուն, իր

սրտում թաղցրած է լինում մի խոր զգացմունք, որի անունն է «մայրական սէր»։

Մայրական սէր—դա մի անսահման ոյժ է, բայց այդ ոյժը պահանջում է զեկավար, ուղղութիւն տուող։ Միայն սէրը երեխային օգուտ չէ կարող բերել, իսկ եթէ այդ սէրը միացած է գիտութեան ու ազատութեան հետ, այն ժամանակ կարող է հրաշքներ գործել։

Կին-մայրը բնազդաբար ցանկութիւն է զգում կրծքով կերակրելու իր երեխային։ Շատ մայրեր այդ բանից էլ զրկուած են՝ հիւանդութեան կամ մի այլ պատճառով։ Այդ միենոյն բնազդը ստիպում է նրան սիրել իր զաւակներին, իսկ ուրիշ... Ուրիշ ոչինչ։ Երբ հարկաւոր է այդ զաւակին, այդ գեռափրթիթ էակին կրթել, կատարեալ մարդ դարձնել, այն ժամանակ անզօր է բնազդը։ Այդ տեղ անհրաժեշտ է գիտութիւն ու նախապատրաստութիւն, որոնցից զուրկ է մեր կանանց ամենամեծ մասը... Դրանց համար մայրական պարտականութիւնները կարծես վերջանում են «ծիծ տալով»։ Երեխային ծծից կտրեց—ուրեմն մայրական ամենագլխաւոր պարտականութիւնից ազատուեց։ Բայց չէ՞ որ կենդանիներն էլ այդպէս են վարուում։ Մի՞թէ մարդը այդ միենոյն աստիճանի վրայ է կանգնած։

Երբ տղամարդը ուզում է մի որևէ արհեստով պարապել, սկզբում նա սովորում է այդ արհեստը։ Հակառակ դէպքում նա պարապ կը մնայ, հասարակութիւնը նրան գործ չի հաւատայ։ Իսկ մայրութիւնը... Մի՞թէ հասարակ արհեստից էլ ստոր է, որ հասարակութիւնը նրա համար ոչ մի նախապատրաստութիւն չէ պահանջում մայրերից։

Երեխաների մահացութեան թւի շատութիւնը, նրանց վատառողջութիւնն ու ֆիզիկական—մտաւոր անբաւարար զարգացումը ցոյց են տալիս, որ մեր մայրերը կանգնած չեն իրանց կոչման բարձրութեան վրայ։

Գուցէ ասողներ լինեն, թէ այդ բանում մեղաւորը իրանք կանայք են։ Ինչու չեն հասկանում իրանց կոչումը, ինչու չեն կատարում իրանց պարտականութիւնները... Այո՛, կանայք էլ են մեղաւոր, բայց ամենամեծ մեղքը տղամարդկանց-ամբողջ հասարակութեան վրայ է ընկնում, որովհետև նրանք են այդ դրութիւնը ստեղծողը, նրանք են կանանց ազատութիւնը ճնշողը, նրանց իրաւունքները սահմանափակողը։

Մեր ընտանեկան կեանքը կարօտ է բարեփոխութեան, կարօտ է գիտութեան լոյսի, բայց մենք նրան չրջապատել ենք անթափանցելի քողով, որպէսզի օտարի աչքը ներս չը թափանցէ։ «Տունը մարդուս ամրոցն է», ասում է ժողովրդական ա-

ռածը, իսկ այդ տան տէրը—տղամարդը ամեն կերպ խոյս է տալիս փոփոխութիւններից։

Մեր մէջ մի տեսակ համոզմունք է կազմուել, թէ մեր ընտանեկան կեանքը շատ լաւ վիճակի մէջ է, թէ նրա գլխաւոր հիմքը կինն է եղել և պիտի լինի, ուստի կանանց դրութեան փոփոխումը կարող է քանդել այդ տան «օջախը», կարող է աւերել ընտանեկան երջանկութիւնը։

Այդ երևոյթի գլխաւոր պատճառն այն է, որ մենք արդէն վարժուել ենք հին կարգերին. իսկ երբ մարդ գոհ է գոյութիւն ունեցող պայմաններից, այն ժամանակ շատ դժուար է նրան համոզել, թէ նրանք վնասակար են, թէ նրանցից աւելի լաւերը կան։ Նոյն իսկ դժգոհ մարդը աւելի չուտ այդ վատ պայմանները անհատական հանգամանքների կը վերագրէ, քան թէ ընդհանուր չարիքի։ Շատերը նոյն իսկ չէին էլ ցանկանայ չարիք պատճառող պայմանները փոխել, վախենալով թէ մի գուցէ նորերը հներից էլ վատթար լինեն։

Ահա այդ հանգամանքները շատ մեծ դեր են խաղում կանանց հարցում։ Դրանց ազդեցութեան տակ մենք չենք ուզում հին կարգերը փոխել, նորերը հաստատել, բայց ամենից առաջ մենք աչքի առաջ պիտի ունենանք հետեւեալ տարրական ճշմարտութիւնները։

Մենք ծնւում ենք ոչ միայն ապրելու, այլ և զարգանալու, առաջադիմելու համար։ Սովորական կենդանիների են նման այն մարդիկ, որոնք կարծում են, թէ միայն գոյութիւն պահպանելով և սերունդ առաջացնելով կատարած կը լինեն իրանց մարդկային պարտականութիւնները։ Բայց մարդիկ բարձր են կենդանիներից, նրանց կեանքի նպատակն էլ բարձր պիտի լինի, նրանք միշտ պիտի առաջադիմեն։

Առաջադիմութիւն ասելով պէտք է հասկանալ այն ամենը, ինչ որ նպաստում է մարդկային երջանկութեանը թէ անհատական և թէ հասարակական տեսակէտից։

Արդեօք համապատասխանում է մեր ընտանեկան կեանքը լիշեալ պահանջներին։ Ո՛չ։ Նա իր ցանցերով ճնշել է կնոջ ազատութիւնը, զրկել է նրան տնտեսական անկախ դրութիւնից։ Նա ոչնչով չէ աջակցում կնոջ առաջադիմութեանն ու երջանկութեանը։ Ուրեմն անհրաժեշտ է բարեփոխութիւն մտցնել՝ կանանց համար տնտեսական անկախ դրութիւն ստեղծելով։

Այդպիսի դրութիւնը անշուշտ բարեփոխութիւն կը մտցնէ ընտանեկան յարաբերութիւնների մէջ. բայց այդ փոփոխութիւնը օգտակար կը լինի, նա չի փոխի ամուսնական յարաբե-

բութիւնները, բացի այն, որ կինն այլևս ամուսնուց տնտեսական կախում չի ունենայ։

Ասողներ կան, թէ կինը չէ կարող լաւ մայր լինել, եթէ տնտեսական անկախութեան ձգտի, եթէ ամուսնանալուց յետոյ էլ ուզենայ իր սեփական աշխատանքով նիւթական բարիքներ ձեռք բերել։ Բայց դա միանգամայն սխալ է։ Մի՞թէ կինը իր ամբողջ ժամանակը զործադրում է մայրական պարտականութիւնների համար։ Ի հարկէ՝ ոչ։ Ուրեմն ինչ վնաս, եթէ նա ազատ ժամանակը զբաղուի գեղարուեստով, գրականութեամբ, արդիւնագործութեամբ՝ մի խօսքով մի այնպիսի զործով, որը կարող է նիւթական որոշ ապահովութիւն տալ և արդամարդու իշխանութիւնից ազատել։

Զը մոռանանք, որ կան մայրեր, որոնք ուղղակի անկարող են իրանց վրայ վերցնել երեխաների հոգատարութիւնն ու դաստիարակութիւնը։ Դրա գլխաւոր պատճառները երկու են։

Առաջինը՝ ամեն մի մայր բնութիւնից չունի այն բոլոր ընդունակութիւնները և ոյժը, որոնք անհրաժեշտ են երեխաներին լաւ խնամելու և մեծացնելու համար։

Երկրորդ՝ ամեն մի մայր չէ ունենում իր զաւակներին դաստիարակելու համար անհրաժեշտ գիտութիւնը։ Ահա այդ հանգամանքներում մանկական պարտէզները կարող են օգնութեան հասնել։

Այդպիսիների համար փրկարար միջոց են մանկական պարտէզները, որոնք զգալի չափով թեթևացնում են մայրական պարտականութիւնները։ Այդ հիմնարկութիւնների նպատակն է՝ ցանկալի ուղղութիւն տալ երեխաների բնական հակումներին։

Երեխային այդ բանը երբէք չի վնասի, մայրն էլ ոչինչ չի կորցնի։ Ի՞նչ վնաս, եթէ երեխան օրուայ մի մասը անցկացնէ հմուտ ձեռքի հսկողութեան տակ։ Ի հարկէ մօր կուրծքը և նրա գգուանքները զարձեալ կը կատարեն իրանց դերը։ Իսկ դրանց հետ միասին երեխան օրուայ մի մասը կ՚անցկացնէ լուսաւոր ու մեծ սենեակներում, կը խաղայ խոտերի ու ծաղիկների մէջ, կը մեծանայ բնութեան զրկում, բանիմաց դաստիարակների ղեկավարութեամբ։ Նա մենակ չի լինի, նրա հետ կը լինեն նաև նրա հասակակից ընկերները։ Բոլորին էլ յայտնի է, որ երեխաները սիրում են միայն իրանց հասակակիցների հետ խաղալ, որովհետև միայն այդպիսիների մէջ կարող է հաւասարութիւն թագաւորել։ Իսկ ընտանիքի մէջ երեխան չէ կարող այդ տեսակ ընկերներ ունենալ։

Մանկական պարտէզից յետոյ մօր հետ անցկացրած ժամերը աւելաւելանիկ, աւելաքաղցր ժամերը կը լինեն երեխայի

համար։ Օրերն այդ տեսակ կանոնաւոր անցկացնելը երեխայի հոգու մէջ կը դրոշմէ հաւասարութեան և ընդհանուր շահերի գիտակցութիւնը և կը հեռացնէ ամեն մի եսական զգացմունք, որը զարգանում է, երբ նա միակ երեխան է ընտանիքի մէջ, կամ երբ նրան ճնշում են մեծ եղբայրներն ու քոյրերը։

Ամփոփելով մեր վերև ասածները՝ կը գանք այն եզրակացութեան, որ մայրերը կարող են հրաշքներ գործել, անգին բարիքներ հասցնել մարդկութեանը, եթէ կանգնած լինեն իրանց կոչման բարձրութեան վրայ, եթէ ունենան գիտութիւն ու տնտեսական անկախութիւն։

III

Հին դարերից սկսած երկու սեռի մէջ բաժանուած աշխատանքի բնական հետևանքը այն է եղել, որ կնոջը բաժին է ընկել տնային գործունէութիւնը—տնտեսութիւնը, իսկ տղամարդուն՝ ամբողջ աշխարհը։ Այդպիսով մայրական բարդ պարտականութիւններից յետոյ կնոջ կեանքում մեծ նշանակութիւն ունի տնտեսութիւնը։ Մենք տեսանք, որ կանայք հասարակական աննպաստ պայմանների շնորհիւ չեն նախապատրաստուում մայրութեան համար։ Այժմ քննենք և տեսնենք, թէ արդեօք նրանք նախապատրաստուում են իրանց միւս գլխաւոր պարտականութեան համար։

Սննդառութեան նիւթերը մինչև մարդու բերանը հասնելը՝ շատ անգամ փոխարինութեան սիստեմի շնորհիւ երկար ճանապարհորդութիւններ են կատարում, երկրից-երկիր են անցնում։ Այդ նիւթերի վերջնական ընտրութիւնն ու մշակումը կընոջ պարտականութիւնն է կազմում։ Կինն է նրանցից կերակուր պատրաստողը։

Եթէ այդպէս է, եթէ ուտելիք պատրաստելը միայն կնոջ սեփականութիւնն է կազմում, ապա ուրեմն պէտք է սպասել, որ նա՝ այսպէս ասած՝ խոհարարական գիտութիւնը լաւ սովորած կը լինի։ Սակայն իրականութեան մէջ այդպիսի բան չը կայ։ Կանանցից շատերը գաղափար անգամ չ'ունեն ուտելիքի մթերքների լաւ ու վատ յատկութիւնների մասին։ Նրանց շատ հեշտութեամբ խաբում են ծախողները՝ լաւի տեղ վատը տալով։ Եթէ ամեն մի տնտեսուհի ունենար մասնագիտական հասկացողութիւն, անշուշտ նա կը նկատէր ու կը հասկանար այն բոլոր խարդախութիւնները, որ կատարում են խանութպանները՝ կաթի, սուրճի, մրգեղէնների, մսի և այլ նիւթերի վերաբեր-

մամբ։ Դրանք այնպիսի խարդախութիւններ են, որոնք երբեմն մեծաւեծ վնասներ են հասցնում մարդկային առողջութեանը։

Խոհարարութիւնն էլ մի այնպիսի արհեստ է, որ պահանջում է որոշ գիտութիւն և նախապատրաստութիւն։

Ճիշտ է, կինը աշխատում է տան մէջ, կերակուր է պատրաստում, բայց այդ բոլորը նա անում է իր «թագաւորի», իր ամուսնու ճաշակին ու պահանջներին բաւարարութիւն տալու համար։ Այդպիսով տղամարդը աւելի երես է առնում, աւելի ազատութիւն է տալիս իր քմահաճոյքներին։ Իսկ կինը... նա պէտք է միշտ խոնարհուի և համբերատար լինի, միշտ պիտի հպատակուի տղամարդու կամքին։ Չէ՞ որ նրանից է ստանում իր ապրուստի միջոցները. ուրեմն դրա փոխարէն ստիպուած է ստրկական դրութեան մէջ մնալ։ Այդպէս են ներկայ կարգերը, այդպէս է նրան հրամայում հասարակութիւնը։

Երբ կինը մի որև է խոհարարական գպրոց է յաճախում, նա այդ անում է միայն այն նպատակով, որ սովորէ թանկագին կերակուրներ պատրաստել, որպէսզի դուր գայ իր մերձաւորին։ Բայց այդ դեռ բաւական չէ։ Նա պիտի աշխատէ սովորել այնպիսի բաներ, որոնք կը նպաստեն նրա ընտանիքի առողջութեանը։ Օրինակ՝ մթերքների որակը, սննդառութեան աստիճանը և այլն։ Առողջ հոգին առողջ մարմնի մէջ կը լինի. իսկ մարմնի առողջութիւնը կախուած է լաւ սնունդից։ Ուրեմն դրանից կարելի է եզրակացնել, թէ մարդկութեան համար որքան մեծ նշանակութիւն ունի կերակուր—սնունդ պատրաստելու հարցը։

Ամենապատակայարմարն այն կը լինի, որ խոհարարական արհեստը յանձնենք յատուկ մասնագէտների։ Հարկաւոր չէ, որ ամէն կին անպատճառ զբաղուի դրանով։ Եթէ նա ընդունակ չէ, նախապատրաստուած չէ—թող իր ոյժերը գործադրէ այլ ասպարէզում, որտեղ որ աւելի օգտակար կարող է լինել։ Բայց դրա համար անհրաժեշտ է քանդել նրա ստրկութեան շղթաները, անհրաժեշտ է ազատութիւն ու իրաւունքների հաւասարութիւն տալ։

—Կինը կերակուր չը պատրաստէ!? անշուշտ կը բացագանչեն շատերը։ Ապա էլ ինչո՞ւ է հարկաւոր նա, եթէ այդ էլ չ՚անէ...

Այո՛, մինչև այժմ նա միայն կերակուր պատրաստելով է ցոյց տուել իր անտեսական արժէքը, որովհետև գործելու ուրիշ ասպարէզ չէ ունեցել։ Տուէք նրան ազատութիւն և այն ժամանակ կը համոզուիք, որ կանայք տղամարդկանցից ոչ պակաս օգտակար կարող են լինել գիտութեան ու հասարակական գործունէութեան բոլոր ասպարէզներում։

Եւ մթէ քիչ փաստեր կան այդ ճշմարտութիւնն ապացուցանելու համար։ Թերթեցէք պատմութիւնը և դուք կը տեսնէք, թէ քանի-քանի կանայք փառքի պսակներ են ստացել իրանց քաջութեան, հայրենասիրութեան, անձնազոհութեան և այլ բարձր յատկութիւնների համար։ Մթէ կանայք չէին Յուդիթը, Եսթերը, Սանդուխտը, Շուշանիկը, Օրլէանի կոյսը և ուրիշ շատերը, որոնց անունները գովասանքով են յիշած պատմութեան մէջ։ Սակայն թողէք պատմութիւնը և մտէք այժմեան քաղաքակիրթ երկիրները՝ Ամերիկա, Եւրոպա և այն ժամանակ դուք կը տեսնէք, թէ որքան բազմաթիւ կանայք արդէն զործում են գիտութեան, գրականութեան, դեղարուեստի և այլ ասպարէզներում։ Մթէ փոքր է շնորհալի դերասանուհիների, երգչուհիների, կին գրողների, նկարչուհիների և այլ կին գործիչների թիւը։

Այդ բոլոր փաստերը ցոյց են տալիս, որ կանայք բացի մայր ու խոհարարուհի լինելուց՝ կարող են նաև ուրիշ ասպարէզներում օգտակար լինել։ Բայց՝ ի հարկէ՝ այդ օգտակարութիւնը տեսնելու համար անհրաժեշտ է փոփոխութիւն մտցնել մեր կեանքի մէջ՝ սկսելով ընտանեկան շրջանից։ Դիմենք օրինակներին։

Եթէ քաղաքներից մէկում չինենք մի մեծ ու յարմար տուն առանձին-առանձին բնակարաններով և ընդհանուր խոհանոցով, որը բոլոր ընտանիքներին ճաշ կը մատակարարէ իրանց սենեակներում, այդ տան մէջ կարգ ու մաքրութիւն պահպանելու համար ամեն մի ընտանիք կարիք չի ունենայ իր սեփական ծառայողներն ունենալու, այլ կը լինեն ընդհանուր ծառաներ բոլորի համար էլ։ Այդպիսի բնակարանների օգուտն այն կը լինէր, որ հնարաւոր կը դառնար ամեն տեսակ յարմարութիւններ ունենալու էժան գնով։ Տան կից կը լինէր երեխաների համար ձմերային ու ամարային այգիներ, ցերեկուայ մանկանոց հմուտ դեկավարների հսկողութեան տակ։ Ամեն մի գործ կը կատարուէր հմուտ մասնագէտների ձեռքով և ի հարկէ աւելի լաւ, քան թէ այժմեան պայմաններում։

Ինչպէս արդէն ասացինք, ամեն մարդ կարող է պահանջել, որ ճաշը իր բնակարանը բերեն, բայց՝ ի հարկէ՝ ամենից յարմարն է ընդհանուր սեղանատանը ճաշել։ Եթէ ընտանիքները կարող են առանց անախորժութիւնների միասին լողանալ, թատրոն ու եկեղեցի յաճախել, երաժշտութիւն լսել, ինչու չը պիտի կարողանան միասին ճաշել։

Շատերը կարող են առարկել, թէ դրանով կարող է ընտանիքի կապը քայքայուել։ Բայց մթէ ծիծաղելի չէ այդպիսի ա-

ռարկութիւնը։ Մթթէ միասին ճաշելով պիտի ընտանիքի անդամները իրար հետ կապուին, իրար սիրեն...

Այդպիսի ընակարանները չափազանց օգտակար կարող են լինել մանաւանդ կանանց համար, որովհետև աշխատանքի խելացի բաժանումը նրանց հնարաւորութիւն կը տայ աւելի քիչ աշխատել, բայց աւելի շատ օգուտ տալ, աւելի հմտութեամբ կատարել յանձնարարուած գործը։

Ներկայումս քսան ընտանիքներում ամենաքիչը քսան կին աշխատում է ճաշ պատրաստելու համար և՝ չը նայելով դրան, դարձեալ անբաւարար է կատարում այդ գործը, մինչդեռ վերևում յիշուած տան մէջ այդ միևնոյն աշխատանքը կարող են կատարել 4—5 հոգի և աւելի հմուտ կերպով։ Այդպիսով ահագին խնայողութիւն է ստացւում։

Տնային պարապմունքներից ազատ մնացած կանայք էլ կարող են գործել ուրիշ ասպարէզներում՝ իրանց գիտութեան և ընդունակութիւնների համեմատ։

Բայց կան կարծողներ, թէ մինչև այժմ կնոջ ձեռքում է եղել տնտեսութիւնը՝ կերակուր պատրաստելն ու տան մաքրութեան վրայ հսկելը, սրանից յետոյ էլ այդպէս պիտի շարունակուի։

Զարմանալի է, որ ամենից քիչ գրաւչութիւն ունեցող այս աշխատանքը միմիայն կնոջ պարտականութիւնն է համարւում։ Ուրեմն կինը, որ համարւում է գեղեցիկ ու քնքոյշ արարած, սիրելի ամուսին, յարգելի մայր, շարունակ պիտի կատարէ խոհարարուհու և աղախնի պաշտօնը։ Մթթէ անբնական չէ դա։

Այո՛, անբնական է, ուստի և անհրաժեշտ է տալ կանանց ազատութիւն ու տնտեսական անկախութիւն, որպէսզի նրանք էլ տղամարդկանց նման իրանց ընդունակութիւնների ու ցանկութեան համեմատ ընտրեն այս կամ այն մասնագիտութիւնը և կանոնաւոր կերպով նախապատրաստուեն դրա համար։

Հին ժամանակներում մարդիկ բաւականանում էին գլխաւորապէս ընտանեկան յարաբերութիւններով, բայց երբ հետզհետէ առաջ եկան նորանոր պահանջներ, երբ հաղորդակցութեան շնորհիւ հեշտացաւ առևտուրը և զարգացաւ արդիւնագործութիւնը, այն ժամանակ փոխուեցին նոյնպէս անհատական յարաբերութիւնները, և գոյութիւն ստացաւ «հասարակութիւնն» ու հասարակական յարաբերութիւնները։

Շատ ժամանակ չէ, ինչ կանայք որպէս անհատներ մասնակցում են այդ հասարակական յարաբերութիւններին, որ մեր

քաղաքակրթութեան էական պայմանն է կազմում։ Դա ոչ թէ բաւականութիւն է կամ զուարճալիք, այլ մի անհրաժեշտութիւն։

Կանանց համար էլ՝ որպէս անհատների՝ պատահել տղամարդկանց կամ կանանց հետ՝ անկախ ընտանեկան յարաբերութիւններից—ներկայումս պահանջ է դառել։ Նա՝ որպէս հասարակական պահանջ՝ որոշ չափով ստանում է իր բաւարարութիւնը, բայց նրա կանոնաւոր զարգացմանը արգելք են հանդիսանում մի շարք ընտանեկան ու հասարակական սովորութիւններ, որոնց պատճառները պէտք է որոնել տնտեսական-սեռական յարաբերութիւնների մէջ։

Տղամարդկանցից շատերը զանազան պատճառներով ստիպուած են լինում երկար ժամանակով կամ մշտապէս հեռու ապրել իրանց աղգականներից. իսկ սեփական ընտանիք կազմելու համար նրանք ոչ միջոց են ունենում և ոչ էլ մտածում են։ Կանայք էլ հետզհետէ սկսում են առանձին ապրել և մի որոշ ժամանակ անհատական կեանք վարել։

Զանազան կլուբները, հիւրանոցները և կահաւորած սենեակներն են այդ դասակարգի մարդկանց ապաստարանը։ Նրանք անկարող լինելով սեփական յարկ կազմել, որ կապուած է մի շարք դժուարութիւնների հետ, ստիպուած են լինում տանել այդ տեսակ հիմնարկութիւնների առողջապահական ու բարոյական աննպաստ պայմանները։

Մենք պէտք է հիմնենք ամուսնութիւնից բոլորովին անկախ մարդկային բնակարաններ, որտեղ կը կարողանային այդ տեսակ մարդիկ ազատ ու ապահով կեանք վարել։ Այդ բանը միայն այն ժամանակ գլուխ կը դար, եթէ կանայք էլ անտեսապէս անկախ դրութիւն ունենային, եթէ նրանց վզին չը փաթաթէին միմիայն խոհանոցային ու տնային աշխատանքները։ Այդպիսի պայմաններում ամուրիները կարող էին ամուսնանալ, երբ որ ցանկանային, առանց ճնշելու մէկի կամ միւսի տնտեսական դրութիւնը։

Եթէ կանայք համոզուած լինեն, որ իրանց երջանկութիւնը և խաղաղ կեանքը ապահովուած կը լինի նաև չ'ամուսնանալու դէպքում, այն ժամանակ նրանք կը զդան սեփական ոյժերի գիտակցութիւն, չեն ստորացնի իրանց արժանապատուութիւնը, այսինքն կ'ունենան այնպիսի յատկութիւններ, որոնք անհրաժեշտ են ամեն մի մարդ-արարածի առաջադիմութեան համար։

Մենք բոլորովին անտեղի կերպով վախենում ենք, թէ ներկայ ընտանեկան կեանքի բարեփոխութիւնը շատերին հնարաւորութիւն կը տայ ընդ միշտ ամուրի մնալու։ Ո՛չ, դա սրխալ կարծիք է։ Այդ բարեփոխութիւնը կը մաքրէ ամուսնու-

թիւնը փողոցային—վաճառականական ստոր հաշիւներից և կը դնէ մի այնպիսի հիմքի վրայ, որպիսին է անկաշառ ու անաբատ սէրը, որը չէ ճանաչում ոչ մի հաշիւ բացի գաղափարական ընկերակցութիւնից։

Ներկայ ընտանեկան—տնտեսական պայմաններում մեր ամենօրեայ յարաբերութիւնները մեր ազգականների կամ ծանօթների հետ շատ սահմանափակ են և կրում են նեղ ընտանեկան բնաւորութիւն։ Մթէ կարելի է պահանջել, որ ընտանիքի բոլոր անդամները յարգեն միևնոյն ծանօթին կամ հիւրին, կամ ընդհակառակը—ծանօթը, հիւրը—բոլոր անդամներին։ Ի հարկէ՝ ոչ։ Բայց որքան՝ անախորժութիւններ են առաջանում այդպիսի պահանջներից։

Ընտանեկան ներկայ կեանքի պայմանները փոփոխելով, այսինքն սեռական հիմքը հասարակականի վերածելով, կարելի է առաջ բերել լայն անհատական ինքնուրոյնութիւն։

Մենք հաշտ աչքով ենք նայում, երբ տղամարդիկ այցելում են կլուբներ և ուրիշ ժողովատեղիներ, նոյն իսկ գովաբանում ենք այդպիսիներին, անուանելով ընկերասէր մարդիկ։ Բայց ինչու ենք դատափետում այն կանանց, որոնք նոյնպիսի ձգտում են ցոյց տալիս, այսինքն ուզում են ընտանեկան յարկից դուրս էլ ժամանակ անցկացնել, ընկերութիւն ունենալ։ Մթէ կինն էլ մարդ չէ մարդկային պահանջներով ու ձգտումներով։

Շատերը աչխատում են երեխաներին էլ «տանը պահել», որպէս զի տունը աւելի գրաւիչ դարձնեն, հետևելով հին նահապետական իդէալին՝ թէ ամբողջ աչխարհը ընտանիքների հաւաքածու է, ուրիշ ոչինչ։ Բայց զրանք մոռանում են, թէ անհատներն են, որ կազմում են ընտանիք, հասարակութիւն ու ամբողջ մարդկութիւն, ուրեմն ամենից շատ անհատական ազատութեանը պիտի նպաստել։

Ամեն մի անհատ կարիք է զգում ունենալու իր նմանները. երեխաները մի առանձին հակում են զգում դէպի երեխաները, երիտասարդները—դէպի երիտասարդները, ծերերը—դէպի ծերերը և այլն։ Ինչպէս որ անհատը կարիք է զգում ունենակութեան, որը նա գտնում է իր «յարկի» տակ, նոյնպէս էլ նա կարիք է զգում մի այնպիսի տեղի, որտեղ կարողանար, գտնել իր նմաններին, իր գաղափարակիցներին։ Ուրիշ խօսքով ասած՝ իւրաքանչիւր անհատ հասարակական լայն յարաբերութիւնների պահանջ է զգում։

Տղամարդը ունի հնարաւորութիւն այդ պահանջին բաւարարութիւն տալու, իսկ կինը—ոչ։ Հասարակութիւնը նրան ըս-

տիպում է փակուած մնալ ընտանեկան յարկի տակ, իր մերձաւորների շրջանում։ Ճիշտ է, կանայք էլ կատարում են զանազան այցելութիւններ, հաւաքւում են միասին, պատում են իրար, հիւրասիրում են քաղցրաւնիքով ու զանազան կերակուրներով, բայց նրանց մէջ չը կայ սերտ կապ, հաստատուն ծանօթութիւն։ Ձեւականութիւնն ու կեղծ քաղաքավարութիւնն է այդտեղ գլխաւոր դեր խաղացողը։ Բարեբախտաբար աւելի քիչ ձեւականութիւն կայ տղամարդկանց յարաբերութիւնների մէջ, որովհետև նրանք աշխատութեան ժամանակ էլ չփւում են իրար հետ, որովհետև նրանց յարաբերութիւնների կապը աւելի բնական է, աւելի պինդ։

Կանանց մէջ էլ կարող է առաջ գալ այդպիսի յարաբերութիւն, եթէ նրանք դուրս գան իրանց փակուած վիճակից, եթէ ամբողջ ընտանեկան կեանքը բարեփոխութեան ենթարկուի։

Երկու սեռի երիտասարդներին թոյլատրւում է որոշ չափով ազատ յարաբերութիւն, բայց բացառապէս սեռական հիմքի վրայ դրուած։ Ամեն մի կրթուած երիտասարդ կամ օրիորդ անչուշտ անբաւական կը լինի իրերի այդ տեսակ դրութիւնից։ Նրանք կ'ուզենային պահպանել իրանց մէջ բնական յարաբերութիւն, սակայն չեն կարողանում դիմանալ հասարակական ճնշմանը։

Երիտասարդների ու օրիորդների կեղծիքը բացւում է մանաւանդ ամուսնական հարցը վճռելուց յետոյ։

Երբ հարանցուի ընտրութիւնը կատարուած է, էլ ինչու ուշադրութիւն դարձնել միւս օրիորդների վրայ, կամ թէ չէ փեսայի ընտրութիւնից յետոյ էլ ինչու ընդունել միւս երիտասարդների սիրալիութիւնները։

Պարզ է ուրեմն, որ երիտասարդների ու օրիորդների արտաքին-ժամանակաւոր մտերմութիւնը միայն ամուսնանալու միջոց է։ Ոչ ոք չէ կարող ենթադրել, որ կինը ամուսնանալուց յետոյ էլ ջերմ ցանկութիւն կ'ունենայ տեսնուել, բարեկամական յարաբերութիւններ ունենալ ուրիշ տղամարդկանց հետ, կամ տղամարդը-կանանց հետ։

Հասարակութեան «բարձր» կոչուած խաւերում ամուսնութիւնից յետոյ որոշ չափով թոյլատրւում է երկու սեռի մէջ ազատ հասարակական յարաբերութիւն, սակայն այստեղ էլ ձեւականութիւնն է մեծ դեր խաղում։

Շատ անգամ պատահում է, որ ամուսնութիւնից առաջ գոյութիւն ունեցող մտերմութիւնը անհետանում է մարդու և կնոջ մէջ, չնորհիւ ընտանեկան-տնտեսական յարաբերութիւնների։ Նրանք այնքան խորն են թաղւում նիւթական հաշիւնե-

րի մէջ, որ ժամանակ չեն ունենում առաջուայ նման մտերիմ լինել։ Այս բոլորը խանգարում են տղամարդու և կնոջ աւելի բարձր և մաքուր յարաբերութիւնը։

Տղամարդը համոզուած է, որ իր յաջողութիւնը կանանց շրջանում կախում ունի իր քսակից-փողից, և նա ահագին ծախսեր է անում կնոջ քմահաճոյքները կատարելու համար։ Այդ բոլորի գլխաւոր պատճառը կնոջ ոչ անկախ տնտեսական դրութիւնն է։ Ուրեմն վերջ դնելով այդ դրութեանը, կարելի է նաև այդ չարիքը վերացնել։

Շնորհիւ զանազան մասնագիտական պարապմունքների՝ կնոջ մէջ կըսկսէ զարգանալ անհատականութիւնը, որը և կը թեթևացնէ կնոջ ու տղամարդու տնտեսական-սեռական յարաբերութիւնը—ճնշումը։

IV

Ուշի ուշով նայենք մեր շուրջը և այն ժամանակ կը տեսնենք, որ ցանկալի աշխատանքն արդէն սկսուել է։

Ազատել ամբողջ մարդկութեան կէսը—իգական սեռը անբընական կերպով առաջացած պայմաններից, տալ նրան միջոց զարգացնելու իր ոյժերը, ստեղծել նոր պայմաններ, որոնք կը փոխէին մարդկային յարաբերութիւնները, կը զարգացնէին հասարակութեան ամբողջ կազմը—ահա սա է այն մեծ աշխատանքի նշանաբանը, ահա դրան է ձգտում կանանց շարժումը։

Այդ շարժումը սկսուած է քաղաքակիրթ երկրներում և մեծ արդիւնքներ է տալիս։ Մեզանում էլ նշմարւում են նրա նշոյլները, հարկաւոր է միայն զարգացնել նրանց և զարկ տալ ցանկալի հոսանքին։

1870 թ. Միացեալ-Նահանգներում միայն 412 նկարիչ ու քանդակագործ կանայք կային, իսկ այժմ—19,810։ Կին-փաստաբանների թիւը միայն 5-էր, իսկ այժմ—308։ Պետական ծառայութեան մէջ գործող օրիորդների թիւը 415-էր, իսկ այժմ—15,000։

Անգլիայում և Վալլէսում ծառայող կանանց թիւը եղել է *).

	1861 թ.	1891 թ.
Գրասենեակներում	408	17,859 կին.
Քաղաքացիական պաշտօններում	1931	8,546 —
Լուսանկարչուհիներ	168	2,469 —
Տպարաններում	419	4527 —

*) «Handbuch der Frauenbevegung» s. 267—268.

Դեղատներում	388	1,340	—
Գրավաճառանոցներում	952	2,240	—

Ի հարկէ այդ բոլորը դեռ իրաւունք չեն տալիս պնդելու, թէ կանայք գերազանցում են տղամարդկանց, կամ նրանց հետ հաւասարուել են։ Կարելի է միայն այսքանն ասել, որ ժամանակակից կինը շատ բաներում տարբերւում է հին ժամանակուայ կնոջից։

Ներկայումս կրթուած կինը բացի «կանացիութիւնից», բացի ֆիզիկական դեղեցկութիւնից, ունի նաև անհատական որոշ ձգտումներ։ Նա այլ ևս չէ բաւականանում միայն «ապրելով», նա ուզում է նաև «գործել»։

Դարաւոր ստրկութիւնը դրել է իր դրոշմը կանանց վրայ, նրանց անչարժութիւնը, փակուած կեանքը և ուրիշից ապրուստի սիջոց ստանալու տենչը կաշկանդել են նրանց ոյժերը, ամուր պատնէշ են բարձրացրել ազատ գործունէութեան առաջ։ Բայց քաղաքակիրթ երկրներում տնտեսական ու բարոյական պահանջները վերջապէս քանդեցին այդ պատնէշը և գործել-աշխատել ստիպեցին կնոջ։

Շատերն աշխատում են միմիայն կարիքից դրդուած, շատերին էլ, ի հարկէ, միայն կարիքը չէ, որ ստիպում է գործունէութեան ասպարէզը մտնել, այլ գիտակցութիւնը, անկախ դրութիւն ստեղծելու ցանկութիւնը։

Մեթէ քիչ կան այնպիսի օրիորդներ ու տիկիններ, որոնք միշտ ձգտում են դէպի տնտեսական անկախութիւն, որոնք զըզուանքով են վերաբերում հօրից կամ ամուսնուց փող խնդրելուն։

Առաջ կինը շատ մեծ դեր էր կատարում տանը իբրև աշխատաւոր, բայց մեքենաների զարգացումը, որի հետևանքն էր տնային արդիւնագործութեան ոչնչացումը, ժամանակաւորապէս զրկեց նրան տնտեսական գործօն լինելուց։ Սակայն այդպիսի դրութիւնը երկար չը տևեց։ Կինը մեքենաների յետևից մտաւ գործարանները և նորից կապուեց տնտեսական կեանքի հետ։

Այժմ շատ դժուար է ցոյց տալ մի այնպիսի արդիւնաբերական ճիւղ, որի մէջ կինը մասնակցութիւն չ'ունենար։ Բանւորուհի-կանանց թիւը հասնում է Միացեալ նահանգներում 3 միլիոնի։ Անգլիայում բանւորների թիւը եղել է *)։

		Տղամարդ		Կին։
1871 թ.	11,593,466, որից	8,270,186	և	3,323,270
1881	11,187,564	7,783,646		3,403,918
1891	12,898,484	8,883,254		4,016,230

*) «Die Frau» s. 205.

Միայն Լոնդոնի գործարաններում ներկայումս աշխատում են մօտ 140,000 բանուորուհիներ։

Առաջ ընտանիքի կին անդամները չատ սերտ կերպով էին կապուած միմիանց հետ. նրանք հաւաքւում էին միասին, կարում էին, աշխատում էին, զրուցում էին, չատ անգամ էլ նրանցից մեծը գիրք էր կարդում՝ իսկ ջահէլները լսում ու աշխատում էին։

Իսկ այժմ չատ դժուար է գտնել մի այնպիսի զբաղմունք կամ մի այնպիսի ընթերցանութիւն, որ կարողանար բոլոր անդամներին էլ բաւականութիւն պատճառել։

Միենոյն ընտանիքի անդամները չունեն այն սերտ-նեղ յարաբերութիւնը, ինչ որ առաջ։ Այժմ հասարակութիւնը ազդում է առանձին մի անհատի վրայ, և ամեն մէկն էլ ուզում է ազատ կերպով իր պահանջներին բաւարարութիւն տալ։ Այդպիսով զարգանում է անհատական ազատութիւնն ու ինքնուրոյնութիւնը։

Կանանց մէջ այս փոփոխութիւնն աւելի նկատելի է, որովհետև նրանք աւելի չատ են ենթարկուած ընտանեկան նեղ կեանքի ազդեցութեանը։

Շատ կանայք, ցանկանում են ոչ միայն սեփական փող ունենալ, այլ և սեփական աշխատանք։ Բայց կան մարդիկ, որոնք հակառակ են կանանց ինքնուրոյն աշխատանքին, որոնք ասում են, թէ կանայք չը պէտք է մրցին տղամարդկանց հետ, չը պէտք է մաքառեն նիւթական կեանքի ուժեղ հոսանքի դէմ։

Այդպիսիները մոռանում են, որ աշխատանքը միայն ապրուստի միջոց չէ։ Մոռանում են, որ աշխատանքը ազնուացնում է մարդուս և զարգացնում է մարմինն ու հոգին։ Երբ կինը չփւում է իրական կեանքի հետ, երբ ձեռք է բերում սեփական աշխատանք, այն ժամանակ նա «սեռական էակից» դառնում է իսկական մարդ։

Շատերն էլ աշխատում են համոզել, թէ կինը իր վրայ վերցնելով մարդկային ընդհանուր պարտականութիւնների մի մասը, կը կորցնէ իր գրաւչութիւնը, իր կանացիութիւնը։

Ի հարկէ, եթէ կարելի լինէր հաստատել, որ աշխատող կանանց դէմքը ծածկւում է մօրուքով, որ նրանց կազմուածքն ու ոսկորները կերպարանափոխւում են, որ նրանք սկսում են բասով (կոկորդով) խօսել և այլն, այն ժամանակ տեղիք կըլինէր երկիւղ կրելու։ Բայց փաստերը ցոյց են տալիս, որ կինը աշխատութեան մէջ էլ միենոյն կինն է մնում։ Տարբերութիւնը միայն այն է, որ վերջինս աւելի փորձուած, աւելի խելացի է

դառնում և իր աշխատանքի շնորհիւ տնտեսական անկախութիւն է ձեռք բերում։

Կանանց հետաքրքրութիւնը դէպի հասարակական շահերը սկզբում ծաղրով ընդունուեց. իսկ այժմ այդպէս չէ քաղաքակիրթ երկրներում։ Օրինակ, Ամերիկայում դժուար է գտնել մի կին, որ չը մասնակցէ մի որևէ հասարակական գործում։

Կանանց ձգտումը՝ կազմակերպել ընկերութիւններ, այս դարի հասարակական ամենանշանաւոր երևոյթներից մէկը պիտի համարել։

Նրանց հիմնած արդիւնագործական, կրթական, կրօնական, ազգասիրական և այլ կազմակերպութիւնները ներկայանում են անհրաժեշտ տարր, մի զօրեղ ոյժ հասարակական գործունէութեան համար։

Այդ կազմակերպութիւնների մեծութեան մասին գաղափար կազմելու համար բաւական է աչքի առաջ ունենալ հետևեալ պերճախօս փաստերը.

Գերմանուհիների „Der Bund deutscher Frauenvereine» անունով *) դաշնակցութիւնն ունի 137 մասնաճիւղեր և 70,000 անդամներ։ Նրա նպատակն է՝ միացնել այն բոլոր ընկերութիւնները, որոնք այս կամ այն ձևով աշխատում են բարձրացնել կանանց վիճակը՝ տնտեսական, բարոյական, իրաւաբանական և հասարակական բոլոր ասպարէզներում։ Զարմանալի զգալի, չափազանց ակներև են այդ հսկայական կազմակերպութեան բարիքները գերմանացի կանանց համար։ Նոյնանման խոշոր կազմակերպութիւններ կան նաև ուրիշ քաղաքակիրթ երկրներում՝ Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Դանիայում և այլն։ Իսկ մեզանում դեռ բազմաթիւ ասողներ կան, թէ կինը միայն ընտանիքի բաժինն է, թէ նա չը պիտի մասնակցէ հասարակական գործունէութեանը, չը պիտի ձգտէ դէպի անկախ աշխատանք։

Բայց չէ՞ որ կանայք ծնւում են, որպէս հասարակութեան անդամներ և ապրում են այդ միևնոյն հասարակութեան մէջ։ Ուրեմն ինչու՞ հեռու պիտի մնան նրա կեանքից, նրա պահանջներից ու գործերից։ Չէ՞ որ կանայք էլ մարդ արարածներ են, ուրեմն ինչու՞ չը պէտք է աշխատեն իրանց դրութիւնը բարւոքել, իրանց համար անկախ դրութիւն ստեղծել։

Կար ժամանակ, երբ կանանց համար մատչելի միակ հիմնարկութիւնը կուսանոցն էր։ Կրօնական կազմակերպութիւ-

*) Helene Lange uud Gertreid Bäumer: «Nandbuch der Frauenbewegung» I Teil s. 147..

նը միակ ապաստարանն էր ամուսնական կեանքից փախչող կանանց համար։ Նրանք այնտեղ սովորում էին աշխատել ընդհանուրի համար, օգնել մերձաւորին, աղքատին, գգուել անտէր որբին, ձեռք մեկնել ընկածին, մխիթարել թշուառին և այլն և այլն։

Ներկայումս էլ գոյութիւն ունեն կուսանոցներ, բայց նրանց կշտին գոյութիւն են ստացել նաև կանացի ուրիշ կազմակերպութիւններ՝ աւելի կենսունակ, աւելի գործունեայ ու արդիւնաւէտ։

Այժմ քաղաքակիրթ երկիրներում կանանց առաջ բաց են եթէ ոչ բոլոր, գոնէ շատ ասպարէզներ։

Իբրև ապացոյց վերցնենք Գերմանիան *). այդտեղ տղամարդկանց հետ հաւասարաչափով ու իրաւունքով գործում են նաև կանայք աղքատախնամ և որբախնամ ընկերութիւնների մէջ։ Այսպէս օրինակ 1902 թ. սկզբում որբերի խնամող կանանց թիւը հասնում էր.

Բերլինում	488-ի
Հանովերում	80-ի
Մանհայմում	75-ի
Կոլմարում	47-ի
Բոննում	80-ի
Բրեմենում	48-ի և այլն։

Տնտեսական պայմանները հետզհետէ բաղմացնում են աշխատանք որոնող մարդկանց թիւը։ Կանայք էլ զգալի տոկոս են կազմում այդ թւի մէջ։ Ահա հէնց այդ պատճառով նրանք սեփական ջանքերով հիմնել են բազմաթիւ ընկերութիւններ, որոնց նպատակն է՝ օգնութեան հասնել անգործներին։

Այդ ընկերութիւնների օգտակարութեան մասին գաղափար կազմելու համար բաւական է յիշել այն փաստը, որ միայն Բերլինի ընկերութիւնը 1900 թ. ընթացքում 3593 կանանց համար գործ-պաշտօն է գտել։ Նոյնքան մեծ է եղել այդ օգնութիւնը նաև միւս քաղաքներում։

Կանանց գործունէութիւնը աւելի մեծ է կրթական ասպարէզում։ Տարէցտարի աւելանում է վարժուհիների թիւը, բազմանում են կրթական գործին նպաստող կանանց ընկերութիւնները։ Անցեալ 1901 թ. այդպիսի ընկերութիւնների թիւը հասնում էր 57-ի։

Զափազանց ուժեղ հոսանք են սկսել բանուորուհիները։ Դրանք ամեն կերպ աշխատում են յետ չը մնալ իրանց բախ-

---

*) Else Lüders: «Stand der deutschen Frauenbeweguug im Beginn des Jahres 1902».

տակիցներից-բանուորներից, ուստի և օրէցօր բազմացնում են կազմակերպութիւնների թիւը, հաւատացած լինելով որ միայն հաւաքական ոյժերով կարելի է պաշտպանել ընդհանուր շահերը և հասնել ցանկալի հետևանքի։ Կազմակերպուած բանուորուհիների թիւը հասնում էր.

1898 թ.	13,481-ի
1899	19,280-ի
1900	22,844-ի

Բանտային կեանքն էլ չէ վրիպել կանանց աչքից։ Նրանք ուղեցել են այդ ասպարէզում էլ գցել իրանց լուման, ուստի և եռանդուն ջանքերով ձեռք են բերել մի քանի իրաւունքներ։ Ներկայումս գերմանական բանտերից շատերում կան բանտապետի օգնականուհիներ, բանտային վերակացուհիներ և այլ կին ծառայողներ։

Բացի այդ բոլորից՝ Գերմանիայի բազմաթիւ քաղաքներում կանայք հիմնել են յատուկ ընկերութիւններ, որոնց նպատակն է՝ մաքառել անբարոյականութեան-պոռնկութեան դէմ, օգնութիւն ու պաշտպանութիւն ցոյց տալով բախտից հալածուած, նիւթական կարիքների տակ ճնշուած կանանց։

Վերջին ժամանակներս բարձրագոյն կրթութիւնն էլ առանձնապէս դրաւում է գերմանացի կանանց։ Նրանց առաջ միանգամայն բաց են տարրական ու միջնակարգ դպրոցները, բայց այդքանը բաւական չը համարելով, նրանք ուզում են բարձրագոյն դպրոցներում էլ ազատ մուտք ունենալ տղամարդկանց հետ համահաւասար։ Թէև դեռ շատ տեղերում խէթ աչքով են նայում այդ ձգտման վրայ, թէև դեռ շատ դպրոցների դռներ փակ են կանանց առաջ, բայց այնուամենայնիւ՝ գերմանացի ուսանողուհիների քանակը այժմ բաւական մեծ թիւ է կազմում։ Այսպէս օրինակ միայն համալսարանական ուսանողուհիների թիւը եղել է 1902 տարեշրջանում.

Բերլինում	611
Բոննում	105
Հալլէում	89
Բրեսլաւում	76
Լայպցիգում	73
Ֆրայբերգում	53
Վիւրցբուրգում	41
Կէօնիգսբուրգում	38
Մարբուրգում	33
Հայդելբերգում	33
Գէօթինգենում	32

Միւնխենում	29
Կեօլնում	19
Հեսսենում	18
Ռօստոկում	7
Մարբուրգում	6
Էրլանգենում	4
Գրայֆսվալդում	2
Տիւբինգենում	2

Ընդամենը 1270 ուսանողուհի։

Բացի դրանից եղել են ուսանողուհիներ նաև մի քանի մասնագիտական բարձրագոյն դպրոցներում։

Այդ բոլորի վրայ աւելացնենք և այն փաստը, որ բազմաթիւ գերմանուհիներ շնորհալի կերպով գործում են գաղարուեստի, գրականութեան ու գիտութեան ասպարէզներում, այն ժամանակ պատկերը կը լրանայ։ Որքան խրատական փաստեր է պարունակում այդ պատկերը հայ կանանց համար...

V

Հասարակութեան աչքում կնոջ բարոյականութիւնը նրա գոյութեան, նրա «լինել-չը լինելու» հիմքն է համարւում։ Վայ այն կնոջը, որի բարոյականութիւնն արատաւորուած է։ Բայց ինչից է կախուած բարոյականութիւնը։ Մեթէ նա մի այնպիսի բարեմասնութիւն է, որի վրայ ազդում է գերբնական ոյժը։ Ո՛չ։ Եթէ ուշի-ուշով քննելու լինենք մեզ շրջապատող կեանքը, այն ժամանակ կը տեսնենք, որ բարոյականութեան հիմքն էլ տընտեսական պայմաններն են։ Այս կամ այն անհատի, այս կամ այն ժողովրդի վարմունքը միշտ կախուած է նրա կենցաղից, նրա գոյութեան պայմաններից։

Որսորդական-ռազմական շրջանում ամենաւելաւ զինուորն ու որսորդը միևնոյն ժամանակ ամենաւելաւ մարդն էր համարւում, որովհետև այդ հմտութիւնից էր կախուած մարդու կենցաղավարութիւնը։

Երկրագործական շրջանում համբերութիւնն ու աշխատասիրութիւնն էր բարձր գնահատւում, որովհետև միայն այդ յատկութիւնների շնորհիւ երկրագործը կարող էր սերմանել ու հնձել։

Իսկ երբ առաջ եկան վաճառականութիւնն ու արհեստները, երբ տնտեսական կեանքը հետզհետէ զարգանալով հասաւ ներկայ բարձր աստիճանին, այն ժամանակ բարոյականութեան

վրայ ունեցած հայեցակէտն էլ փոխուեց։ Բարոյականութեան մասնիկներն էլ բազմացան ու բարդացան։

Ուրեմն թէ անհատական և թէ հասարակական բարոյականութեան զեկավարը չրջապատող պայմաններն են։ Փոխեցէք այդ պայմանները—կը փոխուի նաև բարոյականութիւնը։ Կանայք չատ անգամ անբարոյականութեան գիրկն են ընկնում—պոռնիկ են դառնում։ Բայց փոխեցէք նրանց դաստիարակութիւնն ու չրջապատող սոցիալական պայմանները, տուէք տընտեսական անկախութիւն, և այն ժամանակ այլևս պոռնկութիւն չի լինի։

Կինը—կուսախնձոր է, կինը—չարիքների աղբիւր է, կինը թոյլ արարած է, ասում են չատերը. և այդ կարծիքը երբեմն ճիչտ է դուրս գալիս։ Բայց ով է մեղաւորը։ Ինքը—կինը։ Ո՛չ։ Տիրող տնտեսական սեռական կարգերն են այդ ամենի բուն պատճառը։

Մենք կնոջ մէջ խեղդել ենք առաջադիմութեան ու զարգացման համար անհրաժեչտ ձգտումները և դրա փոխարէն նրա սրտում դրել ենք կեղծիք ու չողոքորթութեան սերմեր։ Մեղաւոր է դրանում կինը։ Ո՛չ։

Մենք մեր կարգերով, մեր դաստիարակութեան սիստեմով տղամարդուն դարձրել ենք անվախ, համարձակ, ազատ, հաստատակամ, իսկ կնոջը—վախկոտ, կասկածոտ, ստրուկ ու թուլակամ։ Այդ բանում մեղաւոր է կինը։ Ո՛չ։

Մենք գովասանքի ու յանդիմանութեան, պարգևի ու պատժի օրէնքների ու սովորութիւնների միջոցով տղամարդու մէջ զարգացրել ենք հասարակական մի չարք օգտակար յատկութիւններ, իսկ կնոջ մէջ ընդհակառակը-ճնչել ենք։ Այդ բոլորից յետոյ իրաւունք ունենք մեղադրելու կնոջը, թէ նա յետ է մնացել տղամարդուց, թէ չատ բաներում տարբերւում է նրանից։ Ի հարկէ ոչ։

Մենք ամեն կերպ ճնչել ենք կնոջ ազատութիւնը, խեղդել ենք նրա ինքնուրոյնութիւնը, բայց միևնոյն ժամանակ գանգատւում ենք, թէ նա տղամարդու հետ հաւասար չափով չէ կարող գործել, ցանկալի արդիւնքի չէ կարող հասնել։ Մի՞թէ անտրամաբանօրէն չէ դա։

Երբ մէկը ծառայ է մտնում մէկ ուրիշի մօտ—նա որոշ չափով կորչնում է իր ինքնուրոյնութիւնը, որովհետև իր կամքն ու ժամանակը կարող է գործածել միայն տիրոջ կամքի թելադրութեամբ։ Այդպիսի պայմաններում որոշ չափով թուլանում է նրա կամքը, սահմանափակւում է ազատ մտածողութիւնը։ Ուրիշ խօսքով ասած՝ նրա մէջ զարգանում են ստրկական հակումները։

Այդ միևնոյնը կարելի է ասել նաև կանանց վերաբերմամբ, միայն աւելի խիստ չափով։ Նրանք այդպիսի ստրկական պայմաններում են եղել ոչ թէ ամիսների ու տարիների, այլ ամբողջ դարերի ընթացքում։ Կանայք միշտ տղամարդկանց իշխանութեան տակ են եղել, նրանց սահմանած օրէնքներին ու կարգերին են հպատակուել, նրանց պահանջների ու քմահաճոյքների թելադրութեամբ են շարժուել, որովհետև այդպէս են ստիպել տնտեսական—սեռական յարաբերութիւնները։

Այո, կինը մի քանի խնդիրներում յետ է մնացել տղամարդուց, բայց այդտեղ մեղաւորը տնտեսական պայմաններն են։ Դրէք տղամարդուն էլ միևնոյն պայմանների մէջ,—և հետևանքը նոյնը կը լինի։

Վերևում մենք տեսանք, թէ կինը որքան մեծ դեր կարող է խաղալ իբրև մայր, իբրև հասարակութեան ու ընտանիքի անդամ, եթէ նա ունենայ իրաւունքներ։

Սակայն այդ իրաւունքները ձեռք բերելու համար նա ամենից առաջ տնտեսական անկախութեան պիտի ձգտէ, տնտեսական պայմանները փոխել պիտի աշխատէ։ Այդ է պահանջում բնական օրէնքը, այդ է անհրաժեշտ երկու սեռերի ներդաշնակ երջանկութեան համար։

Կանայք, եթէ ուզում էք ջախջախել ձեր դարաւոր ստրկութեան շղթան, եթէ ուզում էք կանգնել ձեր կոչման բարձրութեան վրայ՝ լինել ազատ մարդ ու ազնիւ մայր—աշխատեցէք, սովորեցէք սեփական քրտինքով ապրուստ ձեռք բերել։

Աշխատեցէք, որովհետև միայն աշխատանքն է ազնուացընում մարդու մարմինն ու հոգին, միայն նա է ձեր փրկութեան, ձեր ազատութեան ու բարօրութեան իսկական հիմքը։

Աշխատեցէք։

Տիկին ՀՐԱՆՈՅՇ